«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Բառակազմությունը որպես կրտսեր դպրոցականի բառապաշարը հարստացնող միջոց**

ՀԵՂԻՆԱԿ **Անժելա Մլախասյան**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ Դասվար

ՂԵԿԱՎԱՐ Արմենուհի Մելքոնյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն…… 2

1.Բառակազմության ուսուցման ձևերն ու մեթոդները տարրական դպրոցում ..4

2.Տարրական դասարաններում աշակերտի բառապաշարի հարստացման ձևերը …….9

Եզրակացություն……..13

Գրականության ցանկ……..15

Ներածություն

Տարրական դասարանների մայրենիի դասընթացը իրենից ներկայացնում է խոսքային դասընթաց, որը նպատակաուղղված է խոսքի օգնությամբ աշակերտի անձի և անհատականության ձևավորմանը: Մայրենի լեզվի դասընթացը ներկայացնում է որպես երկու հիմնական մասերի ամբողջություն՝ ճանաչողական արժեք ունեցող լեզվական գործնական գիտելիքների և ընթերցանության նյութերի համադրումով: Կրտսեր դպրոցում լեզու ուսուցանելիս պետք է տրվեն այնպիսի առաջադրանքներ, որոնք երեխան կարող է ինքնուրույն դիտարկել, քննարկել, եզրահանգումներ կատարել, սեփական դիտարկումներով հայտնագործել:

Թեմայի արդիականությունը - Երեխայի խոսքի զարգացումը եղել և մնում է մայրենի լեզվի գերագույն նպատակներից մեկը: Այն մայրենի լեզվի ուսուցման տարրական օղակի հիմքերից մեկն է: Խոսքի զարգացման բաղադրիչներն են բառապաշարի հարստացումը և խոսք կառուցելու կարողությունները: Առանց հարուստ բառապաշարի չի կարող լինել գրագետ ու դիպուկ խոսք:

Հետազոտության նպատակն - ուսումնասիրել բառակազմություն թեման և մշակել այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտները կկարողանան պատկերացում կազմել բառերի կազմության առանձնահատկությունների մասին և կհարստացնեն իրենց բառապաշարը:

Հետազոտության օբյեկտը - բառակազմության ուսուցումն է տարրական դասարանի դասագրքերում:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել մայրենիի 2-րդ դասարանի դասագրքերում եղած բառակազմական վարժությունները և վերլուծել դրանք,
- Գտնել բառակազմություն թեմայի ավելի հեշտ և հասկանալի ուսուցման մեթոդները, որպեսզի դրանք հասանելի լինեն տարրական դասարանների երեխաների համար,

- Օրինակներով ցույց տալ, որ վերլուծություններն ու դասագրքում եղած բառակազմական վարժությունները երեխաներին օգնում են արդեն սովորած լեզվական նյութերը ամրապնդել և սովորածը գործնականում կիրառել:

1. Բառակազմության ուսուցման ձևերն ու մեթոդները տարրական դպրոցում

Բառակազմություն բառը, որպես լեզվաբանական տերմին գործածվում է երկու իմաստով: Առաջին իմաստով նշանակում է լեզվաբանության այն բաժինը, որը զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների և կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը:

Բառակազմության ուսուցումը տարրական դպրոցում իրականացվում է վեր- լուծական-համադրական մեթոդով, համաձայն որի՝ լեզվական տարբեր թեմաների ուսուցման ժամանակ վերլուծվում են լեզվի մեջ գոյություն ունեցող բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթները, դիտարկվում են դրանց առանձնահատկությունները, բա- ցահայտվում են բառի, նրա կազմության, կրած փոփոխությունների օրինաչափու- թյունները, նախադասության մեջ և խոսքում ունեցած դերը, ապա ամփոփում և ամ- բողջացնում են կատարած դիտարկումները:

Վերլուծությունը մտավոր աշխատանք է, զարգացնում է աշակերտի մտածո- ղությունը: Յուրաքանչյուր վերլուծության պիտի հաջորդի գործնական աշխատանք, որի ընթացքում աշակերտը պիտի խոսքի մեջ կիրառի իր սովորածը: Վերլուծությունը կատարվում է համադրության հետ միասին, միայն վերլուծությամբ աշակերտը չի կարող մտահանգման հասնել, ուստի նա պիտի կատարի վերլուծական-համադրա- կան վարժություններ. սրանցով են հարստանում աշակերտի տեսական ու գործնա- կան գիտելիքները:

Վերլուծություններն ու վարժությունները կարող են լինել հնչյունաբանական, ուղղագրական, բառագիտական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական, կետադրական և ոճական: Վերլուծության կարող են ենթարկվել թե՛ առանձին բառեր, հատկապես բառակազմության ուսուցման ժամանակ, թե՛ բառակապակցություններ և թե՛ նախադասություններ: Վերլուծությունն ունի ճանաչողական, լեզվական երևույթն ըմբռնելու, յուրացնելու նպատակ, իսկ վարժությունը՝ լեզվական նյութը կիրառել տալու, աշակերտի խոսքը բառերով, քերականական և աճական ձևերով ու հնարքներով հարստացնելու

նպատակ: Օրինակ, երբ հեռուստացույց բառի բաղադրիչները վերլուծելով սովորեցնում ենք նրա կազմությունը հեռ- ուստ- ա- ցույց, դրանով իսկ՝ հայերենի բառակազմության ձևերից մեկը, ապա այդ բաղադրիչներով նոր բառեր կազմելու միջոցով աշակերտները հմտանում են բառակազմության մեջ, նրանք սովորում են, որ այդ նույն ձևով կարելի է բառեր կազմեն, իսկ երբ այդ բառերը կիրառում են նախադասության մեջ, ապա հարստանում է նրանց բառապաշարը:

Բառերը կարելի է վերլուծել, բաղադրիչների բաժանել. օրինակ՝ բառապաշար բառը կարող ենք բաժանել բառ+ա+պաշար, ուղղանկյուն ՝ ուղղ+ անկ+յուն, տարագիր՝ տար+ա+գիր բաղադրիչների: Բառերի վերլուծումը բաղադրիչների պարզում է բառերի կազմը, ցույց տալիս, թե ինչ միավորներից են կազմված բառերը և դրանց տվյալ ձևերը: Եթե այդ բաղադրիչները վերցնենք առանձին-առանձին, անկախ տվյալ բառերից, օրինակ՝ բան, ստեղծ, դարան, ավոր, ություն և այլն, կտեսնենք, որ դրանք բոլորն էլ որոշ իմաս ունեն, իսկ այդ բաղադրիչներից որևէ հնչյուն հեռացնելու դեպքում դրանք կամ բոլորովին կզրկվեն իմաստից, կամ էլ մի ուրիշ իմաստ կունենան: Նշանակում է բառը բաղադրիչների բաժանելով մենք ոչ միայն պարզում ենք բառի կազմը, այլև ստանում ենք այնպիսի միավորներ, որոնք այլևս կազմությամբ վերլուծելի, բաժանելի չեն և տվյալ հնչյունակազմով ու տվյալ իմաստով լեզվական անբաժանելի միավորներ են: Այդ միավորները մեկական հնչյուններ են կամ մեկից ավելի հնչյունների կապակցություններ, որոնք արտահայտում են որոշ իմաստ:

Բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքներն կարևոր են, որովհետև դրանք բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն են: Բառակազմությունից աշակերտների ձեռք բերած գիտելիքները միաժամանակ նպաստում են շրջապատող իրականության մասին նրանց ունեցած տեղեկությունների հարստացմանը, առարկաների, գործընթացների, երևույթների կապերի մասին աշակերտների պատկերացումների խորացմանը: Կարևոր է ոչ միայն ձգտել, որ աշակերտները հասկանան բառիմաստը, այլև զարգացնել խոսքում բառը հասկանալով օգտագործելու նրանց ձեռք բերած ունակությունը: Բառակազմության ուղղությամբ գործնական ունակությունների ձևավորումը նպաստում է նաև ուղղագրական կարողությունների մշակմանն ու դրանց հմտությունների վերածմանը:

Հայտնի է, որ հայերենի ուղղագրության ուսուցման առաջատար սկզբունքը սովորողների կողմից ձևութաբանական հիմքի գիտակցումն է: Այդ պատճառով էլ ուսուցիչը ուղղագրական կարողությունների մշակման ուղղությամբ աշխատանքները պետք է առաջին հերթին իրականացնի՝ սկսելով բառարմատների ուղղագրության ուսուցումից:

Բառակազմական գիտելիքներն ուսուցանելիս պետք է նկատի ունենալ, որ բառի մեջ եղած բոլոր բաղադրիչները փոխադարձաբար կապված են, և յուրաքանչյուր բաղադրիչի իմաստ բացահայտվում է միայն տվյալ բառի մեջ: Այդ պատճառով էլ տարրական դասարաններում արմատի և ածանցի մասին նախնական գիտելիքներն ուսուցանվում են փոխկապակցության մեջ և քայլ առ քայլ:

- Առաջին քայլ, նախապատրաստական ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են նույնարմատ բառերի շուրջ կատարվող աստիճանաբար բարդացող վարժությունների ճանապարհով:
- Երկրորդ քայլ, երեխաները համեմատությունների և վերլուծությունների միջոցով որոշում են նույնարմատ բառերի և արմատի առանձնահատկությունները:
- Երրորդ քայլ, բառի մեջ արմատի դերի և նրա առանձնահատկությունների, արմատի և ածանցի՝ ուղղագրության և բառակազմության միջև գոյություն ունեցող կապի, բառերի ուղղագրության ուսումնասիրում:
- Չորրորդ քայլ, բառի ձևույթաբանական կառուցվածքի մասին երեխաների ունեցած գիտելիքների ընդլայնում, խորացում, ամրակայում, բառակազմական ունակությունների զարգացում, հոլովական վերջավորությունների ուղղագրության յուրացում, բայի ժամանակային և եղանակային վերջավորությունների իմաստների գիտակցում և ուղղագրական կարողությունների ամրակայում:

Ներկայացնենք այս քայլերի ընթացքում իրականացվող աշխատանքների մեթոդիկան: Բառակազմական նախապատրաստական ուսումնասիրություններն իրականացվում են լեզվական վարժությունների կատարման ճանապարհով՝ երեխաներին նախապատրաստելու համար նույնարմատ բառերի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների,

դրանց փոխկապակցության ընկալմանը։ Սակայն նույնարմատ բառերի ուսումնասիրման առաջին փուլում աշակերտները հաճախ այդպիսիք են համարում միայն այն բառերը, որոնք առարկայորեն նույնանուն են (տուն-տնակ, ձուկ-ձկնիկ, շուն-շնիկ, նավ-նավակ), և նույնարմատ չեն համարում այնպիսի բառերը, ինչպիսիք են, օրինակ՝ անտառ-անտառապահ, ձյուն- ձնեմարդ և այլն։ Նրանք մասնավորապես դժվարանում են նույնարմատություն տեսնել ածանցավոր բառերի մեջ։ Այս դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է վարժություններ կատարել բառակազմական տարբեր օրինաչափությունների շուրջ լեզվական իրողությունները ներկայացնելով պարզից դեպի բարդը գնացող սկզբունքով։ Որպեսզի երեխաներն ըմբռնեն նույնարմատ բառերի միջև գոյություն ունեցող իմաստային տարբերություններն ու ընդհանրությունները, շահեկան է դրանք դիտարկել իբրև առանձին բառեր՝ առաջարկել երեխաներին դրանք օգտագործել նախադասության մեջ և կապակցված բնագրում։ Նույնարմատ բառերի ճիշտ որոշման և դրանց իմաստային նրբերանգների ընկալման կարողության ձևավորման նպատակով արդյունավետ է նկարներով կամ համապատասխան առարկաներով աշխատանքը։ Օրինակ՝ կարելի է ցուցադրել մեծ տան և փոքր տան, մեծ ձկան և փոքր ձկան, ծաղկի և ծաղկամանի, ձյան և ձնեմարդի և նման այլ նկարներ ու առաջարկել սեղանին դասավորած բառերն ընտրել և փակցնել բառիմաստին հարմար նկարի տակ։ Այսպիսի վարժությունից հետո աշակերտների համար ակնհայտ կդառնա ոչ միայն որոշ բառերի՝ նույն ծագումն ունենալու հանգամանքը, այլև դրանց իմաստային տարբերությունները։

2. Տարրական դասարաններում աշակերտի բառապաշարի հարստացմանձևերը

Մայրենիի 2-րդ դասարանի դասագրքում ընդգրկված վարժությունները՝ կապված բառակազմության հետ, կօգնեն աշակերտներին որոշակիորեն պատկերացում կազմել արմատի, ածանցի, հոդակապի և վերջավորությունների մասին, իսկ հետագայում՝ 3-րդ և 4-րդ դասարններում այդ թեման ավելի մանրամասն է ուսումնասիրվում: Մայրենի լեզվի դասաժամերին իրականացվող բառակազմական և վերլուծական գործնական աշխատանքներն, որոնք կազմակերպվում են խաղերի ձևով, նպաստում են սովորողների ՝ հայերենի իմացության խորացմանը և լեզվական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը: Երեխաներն աստիժանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդածանցավոր, ինչպես նար հոդակապով և անհոդակապ բառեր: Այդ կարուղություններն

առավել զարգացնելու նպատակահարմար միջոց են հաճախաղակի կազմակերպվող բառավերլուծական բնույթի մի շարք խաղերը, որոնց ժամանակ աշակերտներն առիթ են ունենում ընտրելու արմատը կամ ածանցը:Մայրենիի 2-րդ դասարանի դասագրքում կան ‹‹Բառը բառի մեջ››, ‹‹Վանկախաղ››, ‹‹Նույնատառիկներ››, ‹‹Խառնագիր››, ‹‹Աջ ու ձախ››, ‹‹Բառքամոցի›› վերնագրերով հետաքրքրաշարժ առաջադրանքներ, որոնք երեխաները հաճույքով են կատարում՝ համատեղելով խաղն ու ուսուցումը:

Ներկայացնենք դասագրքից դուրս բերված առաջադրանքների օրինակներ.

1. <u>Բառքամոցի</u>(տրվում է մի բառ, որի տառերով պետք է կազմել նոր բառեր).

պատմվածք- պատ, մատ, ատամ, տաք, տամա, տապ, ծամ,վատ, ամպ և այլն:

1. <u>Բառը բառի մեջ</u> (տրվում են բառեր, պահանջվում է դրանց մեջ գտնել ուրիշ բառեր).

նկար- կար, անտեսանելի- տեսնել, անտես, տեսանելի, պատճառ- պատ, ճառ, արտասանել- արտ, սան, տողադարձ- տող, դարձ և

այլն:

1. <u>Վանկախաղ</u>(տրվում են բառերի խառնված վանկեր, պահանջվում է վանկերը իրար ճիշտ միացնել և ստանալ բառեր).

ա սա պա խան ռույց տաս տամ – տրված վանկերից ստացվում են ատամ, սառույց և պատասխան բառերը:

1. Տրվում են միևնույն արմատից կազմված բառեր, պահանջվում է գտնել այդ արմատը, օրինակ՝ խաղացող, խաղալ, խաղալիք, խաղիկ, խաղարան, խաղացնել: Տրված բառերի մեջ թաքնված է միևնույն <u>խաղ</u> արմատը:

2. Տրվում են պարզ բառեր, պահանջվում է դրանք դարձնել ածանցավոր, օրինակ՝ տանձ-տանձենի, ճուտ-ճուտիկ, խոզ-խոզուկ, հավ- հավիկ, թել-թելել, թիթեռ-թիթեռնիկ, հող-հողոտ, ջուր-անջուր, քար-քարոտ, անձրև-անձրևային և այլն;

Այժմ կներկայացնեմ ուսուցողական խաղի երկու օրինակ:

l փուլ

Դասարանը բաժանվում է 5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ ստանում է պաստառ, որի վրա նկարված է ծաղիկ: Մեջտեղում գրված արմատ-բառի օգնությամբ սովորողները, տրված ժամանակի ընթացքում, թերթիկների վրա գրում են բառ-արմատ կամ ածանց որոնք կցվում են գործ բառին, և ստացվում է նոր ՝ բարդ կամ ածանցավոր բառ: Առաջին փուլում հաղթում է այն խումբը, որը ժամանակին, ճիշտ և անսխալ ավարտում է իր առաջադրանքը:



l l փուլ

Եթե կան 2-3 միաժամանակ հաղթող խմբեր, ապա նրանցից յուրաքանչյուրին տրվում է 2 բառաշար:Այս փուլում երեխաները շարքի բառերը մտովի վերածում են բաղադրիչների և յուրաքանչյուր շարքից մեկական արմատով կազմում նոր բարդ բառ:



Օրինակ՝

արևածաղիկ գետաձի

լայնարձակ մրգատու

հացթուխ բերքառատ

նավապետ մրգատու

ծովեզր մայրամուտ

Ծովեզր և լայնարձակ բառերից ընտրել եզր և լայն արմատները, կազմել նոր բարդ բառ (լայնեզր): Հաղթողն անպայման արժանանում է խրախուսական պարգևի:

Նման դասերն անցնում են գործուն մթնոլորտում և տալիս են դրական արդյունք: Կարևոր է, որ խաղի բոլոր փուլերում երեխաները (նույնիսկ չմասնակցողները) լինեն ինքնավստահ և ուշադիր ամբողջ խաղի ընթացքում:

Այս պաստառի միջոցով նախնական գաղափար է ձևավորվում արմատ հասկացության մասին: Ըստ էության, ծառի բունը հիմնական բառ-արմատն է, որի ճյուղերին հայտնված ածանցների և բառերի օգնությամբ կազմվում են նոր բառեր (ածանցավոր և բարդ):



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մայրենիի դասընթացի բառակազմություն թեման անցնելիս նպատակ եմ ունեցել ուսուցումն այնպես վարել, որ այն օժանդակի աշակերտի նաև բառապաշարի զարգացմանը: Բառակազմությունն անցնում են ոչ միայն նրա համար, որ աշակերտն իմանա, թե ինչ բան է ածանցը, արմատը, բարդ բառը, այլ նաև նրա համար, որ դրանցով հարստացնենք նրա բառապաշարը: Ածանցներն անցնելիս չպետք է բավարարվել ամենասովորական, աշակերտին ծանոթ օրինակներով. դրանք պետք են լեզվական երևույթը հեշտ ըմբռնել տալու համար: Բայց երբ աշակերտը սովորեց, թե ինչ բան է ածանցը, ինչ դեր է կատարում նա, պիտի անցնել նրա կիրառությանը:

Այսպիսով՝գիտելիքների ուսուցումը իրականացվում է գործնական ճանապարհով՝ դասանյութերի և դասանյութերին հաջորդող հարցերին պատասխանելու և առաջադրանքների կատարման միջոցով: Արմատի, ածանցի պարզ և բարդ բառերի ուսուցանելու համար չպետք է բավարարվել զուտ կանոններով: Աշակերտները ոչ միայն բնագրից պետք է գտնեն և ցույց

տան պարզ, բարդ և ածանցավոր բառերը, այլև բացատրել տրված բառերի իմաստները, կազմությունը, օգտագործեն դրանք նախադասությունների մեջ: Դրանով կհեշտանա նոր բառերի յուրացումը:

Այսպիսով՝ **առաջարկում եմ**, որ տարրական դասարաններում քերականական գիտելիքների ուսուցումը պիտի կրի գործնական բնույթ, ունենա լեզվական կարողությունների ձևավորման միտում և իրականացվի մայրենիի դասագրքերում զետեղված ընթերցանության նյութերի ուսումնասիրման ճանապարհով: Այդպիսի մոտեցման դեպքում քերականությունն աշակերտը դիտում է, ընդունում և սովորում է ոչ թե որպես գիտություն, դաս, այլև իբրև իր խոսքից վերցրած, իրեն հարազատ, իր կողմից ընդունված և կիրառված կենդանի երևույթի մեկնաբանություն: Միաժամանակ գիտելիքների ձեռք բերման այդ եղանակը ուսուցման գործընթացը կդարձնի ոչ միայն արդյունավետ, այլև հետաքրքրաշարժ և հաճելի՝ սովորողներին մղելով նոր գիտելիքների յուրացմանը միտված ինքնուրույն ուսումնական գործունեության:

Ուրեմն, որպեսզի բառակազմության ուսուցումը կրտսեր դպրոցական երեխաների համար չդառնա անհասկանալի կանոններ սերտելու գործընթաց, անհրաժեշտ է ուսումնական գործընթաց ճիշտ մշակել և կազմակերպել, այսինքն՝ փուլ առ փուլ, և հաշվի առնելով թե՛ քերականության յուրահատկությունները, թե՛ երեխաների տարիքային առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլբուդաղյան Ս. ‹‹Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա››, 2-րդ հրատ., ‹‹Լույս››, Եր., 1987
2. Սարգսյան Շ., ‹‹Շարահյուսական գիտելիքների ուսուցման հիմնախնդիրը տարրական դպրոցում››, ‹‹Զանգակ››, Եր., 2014
3. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., ‹‹Մայրենի 2-րդ դասարանի դասագիրք››, ‹‹Մանմար››, Եր., 2014
4. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., ‹‹Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ››, ‹‹Մանմար››, Եր., 2013
5. Նախաշավիղ 4.2016